

Գ. Վ. ՊԼԵԽԱՆՈՎԸ ԵՎ ՀԱՅ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԳՈՐԾԻՋՆԵՐԸ

Գ. Բ. ՂԱՐԻՐՋԱՆՅԱՆ
ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս

Գ. Վ. Պլեխանովը (1856—1918) մարքսիզմի անդրանիկ պրոպագանդիստն էր Ռուսաստանում, ռուսական և միջազգային բանվորական շարժման ակնաւոր գործիչ, որի աշխատութիւններով դաստիարակվել են մարքսիստների ամբողջ սերունդները:

Ստալինականութեան ծանր տարիներին Գ. Պլեխանովին տված գնահատականները մեծ մասամբ եղել են միակողմանի, թերագնահատվել են Ռուսաստանում մարքսիզմի տարածման, բոլշևիզմի առաջացման, Ռուսաստանի և միջազգային բանվորական շարժման գործում նրա մեծ ծառայութիւնները: Շատ դեպքերում սխալ են լուսաբանվել Գ. Պլեխանովի հետևորդների (այդ թվում նաև հայ) գործունեութիւնը, նրանց ավանդը մարքսիզմի տարածման և սոցիալ-դեմոկրատական շարժման մեջ: Այժմ, երբ վերականգնւում են Գ. Պլեխանովի նկատմամբ լենինյան գնահատականները, այդ լույսի տակ հարկ է վերացնել նաև Անդրկովկասում և Հայաստանում մարքսիզմի տարածման և բանվորական շարժման մեջ մի շարք գործիչների նկատմամբ եղած ժխտողական վերաբերմունքը, վերացնել «սպիտակ բծերը» նրանց կյանքի և գործունեութեան լուսաբանման հարցերում:

Մեծ են Գ. Պլեխանովի ծառայութիւնները նաև հայ իրականութեան մեջ մարքսիստական գաղափարների տարածման, առաջին հայ հեղափոխական մարքսիստների դաստիարակութեան գործում:

Գ. Պլեխանովի մարքսիստական աշխատութիւններն ուղի հարթեցին ինչպես ողջ Ռուսաստանի, այնպես էլ հայ իրականութեան մեջ մարքսիստական մտքի տարածման և սոցիալ-դեմոկրատական շարժման համար: Նրա հետ անձամբ ծանոթ էին առաջին հայ սոցիալ-դեմոկրատներ Գ. Ղարաջանը (Ս. Տ. Արկումեդ), Ա.Վ. Նազարբեկյանը, Մ. Նազարբեկյանը, Պ. Մնացականյանը, Ա. Տեր-Հարութիւնովը (Տեր), հեղափոխական մարքսիստներ Ի. Լալայանը, Բ. Կոնյանցը, Ա. Զուրաբյանը, Ա. Երզնկյանը, Ա. Մելիքյանը և ուրիշներ: Շատ հայ հեղափոխական գործիչներ նամակագրական կապ են ունեցել Գ. Պլեխանովի հետ:

Դեռևս 1880-ական թվականների վերջերից մի շարք հայ հեղափոխականներ և ուսանողներ արտասահմանում անձամբ ծանոթանում են Գ. Պլեխանովի հետ և նրա առաջարկութեամբ հայերեն թարգմանում ու հրատարակում Կ. Մարքսի և Ֆ. էնգելսի մի շարք աշխատութիւններ: «Այդ ժամանակ,— հիշում է Մ. Նազարբեկյանը,— իմ ամուսինը և ես շատ մոտիկ էինք Պլեխանովին, որը հետաքրքրվում էր մեր ձեռնարկումներով և տալիս էր մեզ մի շարք տեսական և գործնական խորհուրդներ»: Գ. Ղարաջանը պատմում է, որ ինքը Գ. Պլեխանովի հետ ծանոթացել է Ժնևում ուսանելիս՝ 1886 թ. աշնանը: «Առաջին իսկ հանդիպումից,— հիշում է նա,— Պլեխանովն իմ վրա խոր ազդեցութիւն թողեց որպէս փիլիսոփայութեան և սոցիոլոգիայի հիմնավոր գիտակի: Նա այն ժամանակ գեղեցիկ երիտասարդ էր, մոտ 30 տարեկան, միջահասակից բարձր, հպարտ, արտահայտիչ դեմքով, լայն բաց ճակատով: Մաքուր ռուսական առողջանութիւն, ճարտասանութիւն, խելացի դեմք, շարժումներ, կրքոտ սոսն, իսկ որ գլխավորն է՝ լայն էրուդիցիա, այդ բոլորը ցույց էին տալիս, որ ես իմ դիմաց տեսնում եմ ապագա արտասովոր հասարակական-քաղաքական գործիչ...»

Ծն պետք է ասեմ, որ Պլեխանովի հետ իմ հետագա հանդիպումների և մտերիմ ծանոթության ժամանակ իմ այդ տպավորությունն ավելի ու ավելի խորացավ, նրա մասին իմ նախնական կարծիքը լիովին ճշմարիտ դարձավ¹։

Գ. Պլեխանովի դասախոսությունները, Կ. Մարքսի և Ֆ. էնգելսի դիտական սոցիալիզմի տեսությունը և պատմական մատերիալիզմի ուսումնասիրությունը Գ. Ղարաջանին մերձեցնում են «Աշխատանքի ազատագրության» խմբին², և նա սկսում է ավելի հաճախակի հանդիպել խմբի մյուս անդամների հետ։ «Վերջին հանդիպումների ժամանակ,— հիշում է Գ. Ղարաջանը,— մեր խոսակցությունները պատվում էին Կովկասում ս. դ. գործունեության, ս. դ. բանվորական և ինտելիգենտական խմբեր կազմելու, հիմնելու անհրաժեշտության վերաբերյալ հարցերի շուրջ... Կովկաս վերադառնալուց հետո իմ մտադրությունը՝ անպայման այնտեղ հիմնել ս. դ. խմբակներ, հայտնի էր արդեն Պլեխանովին։ Նա մեծ ուրախությամբ լսում էր իմ հայտարարությունն այդ մասին և ինքն իր կողմից հորդորում էր Կովկասում ստեղծել «Կովկասյան սոցիալ-դեմոկրատական միություն»³։

Գ. Պլեխանովը գտնում էր, որ Հայկական հարցը լուծելու համար անհիմն է հույս դնել եվրոպական դիվանագիտության վրա։ Անդրադառնալով Հայկական հարցի վերաբերյալ Գ. Պլեխանովի կարծիքին, Գ. Ղարաջանն ասում է, որ նա ընդգծում էր թուրքահայերի հեղափոխական ինքնագործունեության դարգացման անհրաժեշտությունը, նշում, որ «ռուսահայերը իրենց գլխավոր ուղադրությունը պետք է կենտրոնացնեն Ռուսաստանում քաղաքական ազատագրական շարժման վրա, որը, անկասկած, կթեթևացնի Թուրքիայի ճնշված ժողովուրդների, այդ թվում և հայերի ազատագրման խնդիրը»⁴։

Գ. Պլեխանովը խրախուսում է Գ. Ղարաջանի գործունեությունը՝ հայերեն թարգմանելու և պրոպագանդելու մարքսիստական գրականությունը։ 1887—1888 թթ. Գ. Ղարաջանը ֆրանսերենից՝ Գ. Պլեխանովի ռուսերեն թարգմանության հետ համեմատելով հայերեն է թարգմանել Կ. Մարքսի ու Ֆ. էնգելսի «Կոմունիստական կուսակցության մանիֆեստը», իսկ ռուսերենից՝ Ս. Դիկշտեյնի «Ուլ ինչուլ է ապրում» մարքսիստական հանրամատչելի գրքուկը։ Այդ մասին Գ. Ղարաջանը «Հեղափոխականի հիշատակարանը» ձեռագիր աշխատության մեջ գրում է. «Գ. Պլեխանովին և նրա ընկերներին մենք տեսնում էինք այն ժամանակ մտքի և գործի հերոսական դերի մեջ, նրանք հերոսներ էին և բարոյական, և քաղաքական մտքով»։ Գ. Պլեխանովի գաղափարական ազդեցությամբ Գ. Ղարաջանը հարում է մարքսիզմին և վերադառնալով Կովկաս՝ դառնում տեղի առաջին մարքսիստներից մեկը, ստեղծում սոցիալ-դեմոկրատական խմբեր։

Հայ մարքսիստների ջանքերով 1890-ական թվականներից հայերեն են թարգմանվում և տարածվում Գ. Պլեխանովի աշխատությունները, նրա մասին գրում են հայկական թերթերը։ 1892 թ. լոնդոնում հայերեն լույս է տեսնում Գ. Պլեխանովի «Մայիսի մեկը ամենամյա համաշխարհային տոն է բանվորների» գրքուկը, որը հայերեն թարգմանված մարքսիստական, սոցիալ-դեմոկրատական գրականության առաջին գործն է։ Շուտով հայերեն են թարգմանվում նաև Գ. Պլեխանովի «Կարլ Մարքս», «Ուժ և բռնություն» և այլ աշխատություններ։ 1893 թ. հայ բանվոր հեղափոխականների ասոցիացիայի օրգան «Ազատ Հայաստան» թերթում բարձր է գնահատվում «Կարլ Մարքսի հավատարիմ աշակերտ» Պլեխանովի «Սոցիալիզմը և քաղաքական պայքարը» աշխատությունը⁴։ «Ասոցիացիայի» անդամներից Պ. Մնացականյանը 1896 թ. ժնևում ծանոթանում է Գ. Պլեխանովի հետ, որը նրան ընթեր-

¹ С. Т. Аркомед, За рубежом. Исторические заметки, Тифлис, 1929, с. 21.

² ՍՄԿԿ-ին առնթեր ՄԼԻ հայկական մասնաճյուղի արխիվ, Արկոմեդի ֆոնդ (№ 51), գ. 101, «Հետադարձ հայացք» տետրը, С. Т. Аркомед, նշվ. աշխ., էջ 61։

³ С. Т. Аркомед, նշվ. աշխ., էջ 61։

⁴ «Ազատ Հայաստան», 1893, № 2։

ցանություն համար տալիս է Ֆ. Էնգելսի «Ընտանիքի, մասնավոր սեփականությունից և պետության ծագումը» դիրքը: 1901 թ. վերջին Գ. Պլեխանովի հեղափոխական գործունեության 25-ամյակի նշումը ջերմ արձագանք է գտնում առաջադեմ հայերի շրջանում:

Գ. Պլեխանովի կապերը հայ հեղափոխական գործիչների հետ ավելի սերտ են դառնում 1900-ական թվականների սկզբից, լենինյան «Իսկրայի» հրատարակման և ՌՍԴԲԿ II համագումարի շրջանում, երբ նա պաշտպանում է մարքսիզմի հեղափոխական սկզբունքները, Վ. Ի. Լենինի հետ միասին ղեկավարում նաև Անդրկովկասում ձևավորվող լենինյան-իսկրայական կազմակերպությունները, հայերեն և վրացերեն հրատարակվող սոցիալ-դեմոկրատական կուսակցական գրականության հրատարակման ու պրոպագանդի գործը:

XX դ. սկզբին Գ. Պլեխանովի մերձավոր զինակիցներն են եղել Ի. Լալայանցը, Բ. Կնունյանցը և Ա. Զուրաբյանը:

Ի. Լալայանցը, որը Վ. Ի. Լենինի առաջին հայ զինակիցն էր, Գ. Վ. Պլեխանովի հետ անձամբ ծանոթանում է 1902 թ. օգոստոսին, սիբիրյան աքսորավայրից արտասահման անցնելուց հետո՝ Ցյուրիխում, «Աշխատանքի ազատագրության խմբակի» հիմնադիրներից Պ. Աքսելրոդի տանը: Իմանալով այդ մասին, Վ. Ի. Լենինն անմիջապես Լոնդոնից գրում է. «Այս րոպեին հեռագիր ստացա, որ Կոլումբը (Լալայանցը — Գ. Ղ.) Ձեզ մոտ է: Հազար ողջուն հին բարեկամիս»⁵: 1902 թ. դեկտեմբերի 1-ին Լոնդոնից Գ. Պլեխանովին ուղղած նամակում Վ. Ի. Լենինը հետաքրքրվում է ԺՖԿում հեղափոխական երիտասարդության շրջանում Ի. Լալայանցի կազմակերպած խմբակների վիճակով: Նույն ամսին Ժնև՝ Գ. Պլեխանովին ուղարկած երկու այլ նամակներում Վ. Ի. Լենինը հարցնում էր Ի. Լալայանցի բողոշուրի հրատարակության, նրա որպես «Իսկրայի» տպարանի վարիչի գործերով⁶. հայտնում է, որ շարվածքը հանձնելու համար նրան է ուղարկում Կ. Կաուցկուց կատարած իր թարգմանությունը և հանրամատչելի գրքույկ՝ զինվորների կյանքի մասին⁷:

Գ. Պլեխանովը բարձր է գնահատում Ի. Լալայանցի ծառայությունները հեղափոխությանը և սերտ կապեր ունեն նրա հետ: Ձեռք բերված եմ Լալայանցների օգտին»¹⁰, — գրում էր Գ. Պլեխանովը 1902 թ. դեկտեմբերի 9-ին Վ. Զատուլիչին: Այստեղ նա նկատի ունի Ի. Լալայանցին և նրա կնոջ՝ ակամավոր հեղափոխական Պ. Կոլյաբկոյին, որը 1898 թ. կուսակցության անդամ էր:

1903 թ. սկզբին լենինյան-իսկրայական ուղղության «Պրոլետարիատ» հայերեն թերթի առաջին համարն ստանալուց անմիջապես հետո Վ. Ի. Լենինը հունվարի 28-ին նամակ է գրում Ժնև՝ Գ. Պլեխանովին, խնդրելով Ի. Լալայանցի կամ մեկ ուրիշի միջոցով թարգմանել նրանում նացիոնալիզմի ու ֆեոդերալիզմի մասին զետեղված նյութերը և ուղարկել իրեն՝ «Իսկրայում» հոդված տպագրելու համար¹¹, իր պատասխան նամակում Գ. Պլեխանովը «Պրոլետարիատն» անվանում է «Հայկական եղբայրական օրգան»¹²:

1903 թ. մայիս-հունիսին Բաքվի և Բաթումի լենինյան-իսկրայական կազմակերպություններից ՌՍԴԲԿ II համագումարի պատգամավորները ընտրված Բ. Կնունյանցը և Ա. Զուրաբյանը մեկնելով Ժնև՝ հանդիպումներ

5 Լենինգրադի «Պլեխանովի տան» նյութերից:

6 Վ. Ի. Լենին, ԵԼԺ, հ. 46, էջ 269:

7 Նույն տեղում, էջ 287—288:

8 Ленинский сборник, т. IV, с. 182.

9 Վ. Ի. Լենին, ԵԼԺ, հ. 46, էջ 297:

10 «Исторический архив», 1956, № 6, с. 11.

11 Վ. Ի. Լենին, ԵԼԺ, հ. 46, էջ 322:

12 Ленинский сборник, т. IV, с. 211—212.

են ունենում Վ. Ի. Լենինի և Գ. Պլեխանովի հետ, որոնք գլխավորում էին կա-
յուն իսկրայականների խումբը: Համագումարի նիստերի ժամանակ Բ. Կնուն-
յանցը և Ա. Զուրաբյանը պաշտպանում են Վ. Ի. Լենինի և Գ. Պլեխանովի
գիծը¹³:

1903 թ. հոկտեմբերի 20-ին Վ. Ի. Լենինը և Գ. Պլեխանովը ժնկից նա-
մակ են գրում Թիֆլիս՝ ՌՍԴԲԿ կովկասյան միութենական կոմիտեին, հայտ-
նելով, որ նրանց գործերի մասին տեղեկություն են ստացել Բ. Կնունյանցի
ու Ա. Զուրաբյանի միջոցով և ողջուն են հղում Կովկասի ընկերներին՝ չեղ-
որեն ցանկանում նրանց հաջողություններ աշխատանքի մեջ: Նույն նամա-
կում Վ. Ի. Լենինը և Գ. Պլեխանովը հայտնում էին ժնկում վրացական և հայ-
կական գրականության հրատարակության կազմակերպման մասին, որին
ձեռնամուխ են եղել ձեռնհաս ընկերները¹⁴: Դրանց թվում էին Ստ. Շահում-
յանը, Ա. Երզնկյանը և Մ. Մանուչարյանը (Չար), որոնք անձնական կապեր
ունեին Գ. Պլեխանովի հետ: 1904 թ. նոյեմբերի 28-ին Վ. Ի. Լենինին գրած
նամակով Ստ. Շահումյանը խնդրում է, որ նա և Գ. Պլեխանովին աշխատակցեն
հրատարակության նախապատրաստվող հայերեն լեզալ մարքսիստական ժո-
ղովածուին¹⁵:

Ստ. Շահումյանի հին ընկերներից Մ. Մանուչարյանը հիշում է, որ դա-
րասկզբին արտասահմանում գտնվող Ստ. Շահումյանի առաջ խնդիր էր դրե-
ված միավորել հայ սոցիալ-դեմոկրատներին: «Այդ միավորման աշխատան-
քի մեջ,— գրում է նա,— ներգրավվեցին նաև Ռուսաստանի ս. դ. կուսակցու-
թյան այնպիսի ականավոր առաջնորդներ, ինչպես, օրինակ, Գ. Պլեխանովը.
Պ. Աքսելրոդը»¹⁶:

1904 թ. նոյեմբերի 28-ին Վ. Ի. Լենինին գրած նամակում Ստ. Շահում-
յանը Պետերբուրգի մի խումբ հայ ուսանողների անունից դիմում է նրան ու
Գ. Պլեխանովին՝ մասնակցելու իրենց կողմից նախատեսված մարքսիստա-
կան ժողովածուի հրատարակությանը, հոգևածներ գրել: Այդ նույն նամակում
նա հայտնում է, որ ինքն այդ մասին նամակ կգրի նաև Գ. Պլեխանովին¹⁷:

Գ. Պլեխանովը մեծ օգնություն էր ցույց տալիս ՌՍԴԲԿ Կենտկոմին կից
վրացերեն և հայերեն լեզուներով սոցիալ-դեմոկրատական կուսակցական
գրականության հրատարակության ժնկյան հանձնաժողովին, որի ղեկավարը
Ստ. Շահումյանն էր: Հանձնաժողովը տպագրում է նաև Գ. Պլեխանովի գոր-
ծերը:

Վ. Ի. Լենինի և Գ. Պլեխանովի օգնությամբ Բ. Կնունյանցը, Ա. Զուրաբո-
վը և Ստ. Շահումյանը վճռական պայքար են մղում ժնկում 1903 թ. հիմնա-
դրված «Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպության»
դեմ, որի անդամներին Վ. Ի. Լենինն անվանել է ժնկյան մի զույգ կազմալու-
ծիչներ՝ առանց որևէ լուրջ կապերի Կովկասի հետ¹⁸: Այդ խմբի պարագլուխ-
ներից էր ժնկի համալսարանի ուսանող, բանաստեղծ ու գրականագետ Ե.
Պալյանը, որն անձնական կապեր ուներ Գ. Պլեխանովի հետ: Ժնկում նա իր
կնոջ միջոցով ձեռք էր բերել տպարան, ուներ հարուստ գրադարան, որից
բաժնվում էր նաև Գ. Պլեխանովը: 1903 թ. Ե. Պալյանը հրատարակում է «Սո-
ցիալ-դեմոկրատների միությունը և իր «Պրոլետարիատ» օրգանը» գրքուկը՝
Միության և նրա տպագրի օրգանի դեմ: Վ. Ի. Լենինի և նրա հայ զինակից-
ների օգնությամբ Գ. Պլեխանովը իր կապերը խզում է Ե. Պալյանի հետ, որը
1904 թ. սոցիալ-դեմոկրատական գործունեությունից հեռանալով վերադառ-
նում է Բաքու և նվիրվում գրական աշխատանքի:

13 Второй съезд РСДРП, Протоколы, М., 1959.

14 Վ. Ի. Լենին, ԵԼԺ, հ. 46, էջ 382—383.

15 Ստեփան Շահումյան, ԵԼԺ, հ. 1, էջ 56—57.

16 «Ստեփան Շահումյանը ժամանակակիցների հուշերում», Երևան, 1984, էջ 178—188.

17 Ստեփան Շահումյան, ԵԼԺ, հ. 1, էջ 56—57.

18 Վ. Ի. Լենին, ԵԼԺ, հ. 47, էջ 79—80.

1905—1908 թթ. իրանական հեղափոխության տարիներին հայ սոցիալ-դեմոկրատներ ու հասարակական գործիչներ Հ. Կարախանյանը, Վ. խաչատրյանը, Ա. Զիլինկարյանը (Զիլինկիրյան) և Տիգրան Դերվիշը մի շարք նամակներ են գրում Գ. Պլեխանովին՝ պարզաբանելու մարքսիստական տեսության պրոբլեմները և ծանոթացնելով նրան իրանում ծավալվող հեղափոխական իրադարձություններին, խնդրում են պատասխանել իրենց հետաքրքրող հարցերին։ Այս նամակագրությունը խիստ կարևոր է պարզելու Գ. Պլեխանովի վերաբերմունքն Արևելքում տեղի ունեցող քաղաքական իրադարձությունների և սոցիալ-դեմոկրատների գործունեության նկատմամբ։

1905 թ. սեպտեմբերի 15-ին Հ. Կարախանյանը Թավրիզից Գ. Պլեխանովին գրում է. «Թավրիզում սոցիալ-դեմոկրատիայի մի քանի կողմնակիցների շրջանում երջանիկ միտք է հղացել՝ խմբակ կազմել և զրույցների ու սխտեմատիկ ընթերցանությունների միջոցով իրենց համար մշակել ամբողջական սոցիալ-դեմոկրատական աշխարհայացք։

Լավ գիտակցելով, թե որքան օգտակար կլինեն մեզ համար ձեր երկերը և հատկապես «Պատմության նկատմամբ մոնիստական հայացքի հարցի շուրջը» աշխատությունը, ես համարձակություն ունեմ դիմելու Ձեզ խնդրելով ուղարկել թեկուզ մեկ օրինակ վերոհիշյալ գրքից, սակայն, ցավոք սրտի, իմ նամակի պատասխանը չստացա։

Կարդալով Ձեր հոդվածները ինձ մոտ հարց ծագեց՝ արդյոք մեր քաղաքակրթությունը չի տանում բոլոր ժողովուրդների և բոլոր կուլտուրաների միաձուլման։ Ես անձամբ այն կարծիքին եմ, որ չկան ազգեր ռոշակի և անվիճելի հոգեկան գծերով։ Միևյուրեքներն այժմ այն չեն, ինչ միջին դարերում, մենք հայերս այժմ խիստ տարբերվում ենք 19-րդ դարի սկզբի մեր նախնիներից, երբ Կովկասը միացվեց Ռուսաստանին։ Մեծ բավականություն մեզ կստանա, երբ կարծիքը այդ հարցի մասին։

Խնդրում եմ ուղարկել նաև մեկ օրինակ ձեր «20 տարում» գրքից...»¹⁹։

Հ. Կարախանյանն այդ ժամանակ Թավրիզում ուսուցիչ էր, 1910 թ. նա տեղափոխվեց Բաքու և մտավ բոլշևիկների կուսակցության շարքերը։

Վ. խաչատրյանը և Ա. Զիլինկարյանը Գ. Պլեխանովին գրած իրենց նամակում նրան անվանում էին բանվորական ուսուցիչ։ 1908 թ. նոյեմբերի 19-ին Թավրիզից ուղարկած իր նամակում Վ. խաչատրյանը նկարագրում էր իրանում ծավալվող հեղափոխական շարժումների վիճակը և խնդրում Գ. Վ. Պլեխանովին՝ ցուցումներ տալ իրենց հետագա աշխատանքների մասին։ Նամակին որպես հավելված կցված է Թավրիզի սոցիալ-դեմոկրատների 1908 թ. հոկտեմբերի 16-ի ժողովի արձանագրությունը²⁰։

Ա. Զիլինկարյանի (Թավրիզից) և Տիգրան Դերվիշի (Ժնևից) 1908 թ. դեկտեմբերին Գ. Պլեխանովին ուղղած նամակները գրված են ֆրանսերեն։ «Իմ մարքսիստական կրթությամբ, — գրում է Ա. Զիլինկարյանը, — ես պարտական եմ Մարքսին, էնգելսին, Ձեզ, Կաուցկուն։ Ինչ վերաբերում է, առանձնապես, մարքսիզմի փիլիսոփայությանը և պատմական մատերիալիզմի Ձեր կոնցեպցիային, Ձեր աշխատությունները՝ «Մեր քննադատների քննադատությունը», «Մոնիստական հայացքը», «20 տարում» և այլն, ես գտնում եմ գրանցում լավագույն ցուցումները։ Այժմ ձեր բանավեճերը Բոգդանովի հետ ինձ շատ են հետաքրքրում և ես բավականությամբ տեսա «Գոլոս սոցիալ-դեմոկրատի» վերջին համարում զետեղված ձեր երկրորդ նամակը։ Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատիայի շարքերում փիլիսոփայական հայացքները կենդանի հետաքրքրություն են առաջացնում»²¹։

¹⁹ Философско-литературное наследие Г. В. Плеханова, т. 11, М., 1973, с. 107—108.

²⁰ Նույն տեղում, էջ 108—114.

²¹ Նույն տեղում, էջ 119—120.

Այնուհետև Ա. Զիլինկարյանը գրում էր, որ Իրանում սոցիալ-դեմոկրատական գործունեության ծավալման անհնարինության տեսակետին կանգնած ընկերներին համոզելու համար ինքը խորհուրդ է տվել կարդալ Գ. Պլեխանովի «Ռուսաստանում սովի դեմ պայքարում սոցիալիստների խնդիրների մասին» գիրքը, որտեղ ասված է. «Մենք ոչ միայն չենք ուզում ձուլվել որևէ այլ փուլակցության մեջ, այլ ընդհակառակը, կարծում ենք, որ ռուս սոցիալ-դեմոկրատները, պետք է և շատ հեշտ կարող են իրենց դրոշի շուրջը համախմբել ռուս բնակչության բոլոր այն շերտերին, որոնց բուն վիճակը ստիպում է նրանց տատանվելու բուրժուազիայի և պրոլետարիատի միջև»²²:

Իրանի հայ սոցիալ-դեմոկրատները Գ. Պլեխանովից խնդրում էին նրա այն աշխատությունները, որոնք տողորմած էին հեղափոխական ոգով, քննադատում էին ռևիզիոնիստներին ու օպորտունիստներին, պարզաբանում էին մարքսիստական տեսությունը. դրանք էին՝ «Պատմության նկատմամբ մոնիստական հայացքի հարցի շուրջը», Ֆ. էնդելսի «Լյուդվիգ Ֆոյերբախ» գրքի առաջաբանը, «Մեր քննադատների քննադատությունը», «20 տարում» ժողովածուն: Գ. Պլեխանովի այս աշխատությունները Վ. Ի. Լենինը երաշխավորում է ընթերցողներին:

1910 թ. Գ. Պլեխանովը գրում է Գ. Ղարաբաջյանի «Բանվորական շարժումը և սոցիալ-դեմոկրատիան Կովկասում» գրքի առաջաբանը: Գիրքը լույս էր տեսել ժնևում՝ 1910 թ.: Այն հեղինակը նվիրել էր Գ. Պլեխանովին, որպես Ռուսաստանում գիտական սոցիալիզմի նախահոր և ռուսական սոցիալ-դեմոկրատիայի ամենականավոր հիմնադիրներից մեկի՝ ի նշան դեպի նա ունեցած անկեղծ երախտագիտության ու խորը համակրանքի²³: Գ. Պլեխանովին ուղղված իր խոսքերում նշելով նրա անգնահատելի ծառայությունները ռուսական սոցիալ-դեմոկրատիայի նկատմամբ, Ս. Ս. Արկովեդը գրում էր. «Մասնավորապես կովկասյան սոցիալ-դեմոկրատիան շատ բանով ձեռք է պարտական: Նրա շարժերում դուք քիչ աշակերտներ, հետևորդներ ու համակիրներ չեք գտնի»²⁴:

Արկովեդի գրքի համար գրած առաջաբանում Գ. Պլեխանովը պաշտպանում է Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական կուսակցության անխեղձ գործունեությունն ընդդեմ լիկվիդատորների և այդ կապակցությամբ խիստ քննադատելով կովկասյան լիկվիդատորներին և հատկապես նրանց լիդեր Ն. Ժորդանիային, նշում է. «Ըստ միանգամայն ժամանակին եմ համարում ընկ. Ս. Ս. Արկովեդի գրած Կովկասի ճեղափախական շարժման պատմության դրվագի լույս ընծայումը: Այս դրվագը վերականգնում է ընթերցողների հիշողության մեջ այնպիսի փաստեր, այնպիսի գաղափարներ ու պայքարի այնպիսի միջոցներ, որոնք առանձնապես պարզ ու հասկանալի են դարձնում լիկվիդատորական» դատողությունների խայտառակ անհեթեթությունները:

Ընկ. Ս. Ս. Արկովեդի գիրքն ընթերցողի հիշողության մեջ վերականգնում է ռուսական սոցիալ-դեմոկրատիայի ամենալավ տրադիցիաները: Այս բանը բավական է հենց, որպեսզի սրտանց հաջողություն ցանկանանք նրան:

Կարիք կա արդյոք ավելացնել այստեղ, որ ինձ խորապես շարժեցին այն պարզ, ջերմ ու բարեկամական խոսքերը, որոնցով դիմում է նա ինձ իր նվիրատվության մեջ: Մի բան կասեմ. ընկ. Ս. Ս. Արկովեդի ու նման ընկերների ինձ տածած համակրանքը կարող է վարձահատույց լինել այն շատ ծանր ընկերների համար, որ անխուսափելի են ներկա պահին, անսպասելի դավաճանությունների ու ամոթալի երերումների ժամանակ: Հուսանք, որ շուտով կանցնի այս ստոր ժամանակը և «արևելյան սոցիալ-դեմոկրատիան», որի

²² Г. В. Плеханов, Соч., т. III, с. 409.

²³ Ս. Ս. Արկովեդ, Բանվորական շարժումը և սոցիալ-դեմոկրատիան Կովկասում, մաս 1, Երևան, 1929, էջ 17:

²⁴ Նույն տեղում:

մասին խոսում է հեղինակը, օր առաջ կկազդուրվի իր ապրած ճգնաժամից»²⁵։ ՌՄԴԲԿ օրդան «Սոցիալ-դեմոկրատ» թերթի 1910 թ. սեպտեմբերի 12/30-ի համարում տպված «Կովկասում սոցիալ-դեմոկրատական, բանվորական շարժման մասին» հոդվածում հեղինակը նշում է, որ Ս. Ս. Արկոմեդի «գիրքը բազմաթիվ փաստական նյութեր է պարունակում և արժանի է ամենաշատ տարածման։ Ընկեր ընթերցողների ուղադրությունն եմ հրավիրում այն հետաքրքիր առաջաբանի վրա, որը գրել է ընկ. Գ. Վ. Պլեխանովը ընկ. Արկոմեդի աշխատության համար»²⁶։ Ս. Ս. Արկոմեդի գրքի հակալիկվիդատորական ուղղությունն արժանացավ Վ. Ի. Լենինի պաշտպանությանը։ Հստ Ս. Ս. Արկոմեդի վկայության, Վ. Ի. Լենինը այդ գրքի 2000 օրինակ արտագնաց տպարանից, որը գրավվել էր գիրքը տպագրության համար նրան հասանելի գումարը ժամանակին վճարելու հնարավորությունը չունենալու պատճառով²⁷։ ՍՄԿԿ Կենտրոնական կոմսակցական արխիվում, Վ. Ի. Լենինի ֆոնդում պահպանվում է Արկոմեդի գրքի օրինակը, Վ. Ի. Լենինի անձնական գրքերի կնիքով և տեքստում Գ. Պլեխանովի առաջաբանի վրա Վ. Ի. Լենինի կատարած ընդգծումներով²⁸։

Գ. Պլեխանովի նկատմամբ հայ բուլժեիկների վերաբերմունքի լենինյան գնահատականը տրված է Ստ. Շահումյանի գործերում։ Նա Գ. Պլեխանովին անվանել է «Մեր վետերան և ուսուցիչ»²⁹, մարքսիզմի ականավոր թեորետիկներից մեկը³⁰, հայ մարքսիստների ուսուցիչներից։ 1916 թ. սեպտեմբերի 18-ին Թիֆլիսի «Պայքար» թերթում տպագրված «Մեր Սուրենը» մահախոսականում Ստ. Շահումյանը նշում է, որ Ս. Սպանդարյանի «հոգևոր հայրերն ու ուսուցիչներն են եղել Չերնիշևսկին, Բելինսկին, Պլեխանովը, ապա՝ Մարքսը, էնգելսը, Կաուցկին»³¹։

1918 թ. հունիսի 15-ին Բաքվի սովետի արտակարգ նիստում տված զեկուցման հենց սկզբում Ստ. Շահումյանը, Գ. Պլեխանովի մահվան կապակցությամբ հարկ է համարում բուլժեիկյան կուսակցության անունից հայտարարել, որ «Գ. Վ. Պլեխանովը որպես մարքսիզմի թեորետիկ եղել է և մնում է հեղափոխական մարքսիստական դպրոցի ամենաականավոր ներկայացուցիչներից մեկը»³²։ Այնուհետև խոսելով Գ. Պլեխանովի թույլ տված սխալների մասին, Ստ. Շահումյանը նշում է. «Բայց Պլեխանովն ունի այնպիսի մեծ ծառայություններ անցյալում, որ նրա կյանքի վերջին տարիները պետք է հաշվել մահացման պրոցես... Բուլժեիկների կուսակցությունը... իրեն համարում է Պլեխանովի իդեալների լավագույն տարածողը, ուստի և նրա՝ որպես ուսուցչի ու հեղափոխականի հիշատակը չափազանց թանկ է մեզ համար...»³³։

Սովետական իշխանության տարիներին հայերեն թարգմանվում ու տասնյակ հազարավոր տպաքանակով հրատարակվում են Գ. Պլեխանովի աշխատությունները, երկերի ժողովածուները փիլիսոփայության, պատմության, գրականության ու արվեստի վերաբերյալ։

Գ. Պլեխանովի մասին հոգվածներով հանդես են եկել բուլժեիկ գործիչներ Ա. Կարինյանը, Ա. Խումարյանը, Հ. Կարախանյանը և ուրիշներ։ Գ. Պլեխա-

25 Г. В. Плеханов, Соч., т. XIX, с. 288, Ս. Ս. Արկոմեդի, Բանվորական շարժումը և սոցիալ-դեմոկրատիան Կովկասում, էջ 20, 30։

26 Социал-демократ, 1910, № 15—16։

27 Ս. Ս. Արկոմեդի, Բանվորական շարժումը և սոցիալ-դեմոկրատիան Կովկասում, էջ 3։

28 Владимир Ильич Ленин. Биографическая хроника, т. 2, с. 626. Библиотека В. И. Ленина в Кремле, М., 1961, с. 139—140։

29 Ստեփան Շահումյան, ԵՊԺ. հ. 2, էջ 417։

30 Նույն տեղում, հ. 3, էջ 20։

31 Նույն տեղում։

32 Նույն տեղում, հ. 5, էջ 101։

33 Նույն տեղում, էջ 101—102։

նովի երկերի հրատարակության և պրոպագանդի, կյանքի ու գործունեության, տեսական ժառանգության ուսումնասիրման գործում մեծ են Վ. Վահանյանի (Տեր)³⁴ ծառայությունները: 1922 թ. ապրիլի 27-ին Վ. Ի. Լենինը ՌԿ (ր)Կ Կենտկոմի քաղբյուրոյի նիստում առաջարկում է «Հանձնարարել րն/». Կամեն- ևին ընկ. Տերի հետ բանակցել և իրականացնել Պլեխանովի հեղափոխական երկերի հրատարակությունը՝ մեկ ժողովածուով»³⁵: Այս մասին ընդունվում է Վ. Ի. Լենինի դրած որոշումը:

Ծանոթանալով Ժողկոմխորհի քարտուղարի գրությանը, որում շարադրվում էր «Պող ղնամենեմ մարկսիզմա» փիլիսոփայական և հասարակական-տնտեսագիտական հանդեսի խմբագիր Վ. Վահանյանի խնդրանքն իրեն ընդունելու մասին, Վ. Ի. Լենինը մակագրում է «Այսօր Ժ. 7-ին, ստուգել՝ կես ժամ առաջ»³⁶:

1924 թ. Մոսկվայում հայերեն հրատարակված «Լենին» ժողովածուում զետեղված է Վ. Վահանյանի «Հեղափոխության վարպետներից ամենամեծը» հոդվածը, որում Վ. Ի. Լենինին ու Գ. Պլեխանովին համեմատելով Վ. Վահանյանը գրում է. «Պլեխանովը տեսաբան էր ըստ կոչումի, ինչու և նրա ձեռնարկում դիալեկտիկան ամենանուրբ արիադնյան թելը դարձավ՝ մարդկային մտքի, իդեոլոգիայի խիստ բարդ լաբիրինթոսի ըմբռնման ու բացատրության համար:

Լենինի համար դիալեկտիկան այն սուր կացինն էր, որով նա այսօրվա խիտ ու բարդ հյուսված անտառի մեջ դեպի ապագա տանող ճանապարհն էր բանում»³⁷: Այնուհետև Վ. Վահանյանը քննադատում է Գ. Պլեխանովին՝ Վ. Ի. Լենինի նկատմամբ անիրավացի, շատ անարդարացի հանդիմանանքների համար:

1920-ական թվականներին Վ. Վահանյանը հիմնականում «Պող ղնամենեմ մարկսիզմա» ամսագրում մի շարք լուրջ հոդվածներ հրապարակեց Գ. Պլեխանովի ու նրա հիմնադրած «Աշխատանքի ազատագրություն» խմբի մասին:

1923 թ. օգոստոսին Վ. Վահանյանը գալիս է Երևան, մի շարք դասախոսություններ կարդում Գ. Պլեխանովի մասին: Այդ օրերին «Խորհրդային Հայաստանում» տպագրված «Ընկ. Տերի դասախոսությունները» հոդվածում Հ. Ազիզյանը գրում է. «Պող ղնամենեմ մարկսիզմա» ամսագրի խմբագիր ընկ. Տերի (Տեր-Վահանյան) Երևան ժամանելը... Գ. Վ. Պլեխանովին նվիրված դասախոսությունը մեզ համար մեծ նորություն էր: Յրվում է շատերի մեջ Պլեխանովի մասին ունեցած սխալ հասկացողությունը: Ընկ. Տերը հատկապես զբաղվել է Պլեխանովի ուսումնասիրությամբ...»³⁸:

1923 թ. սեպտեմբերին «Խորհրդային Հայաստան» թերթում տպագրվում է Գ. Դընդունու հոդվածն «Աշխատանքի ազատագրություն» խմբի և նրա նշանակության մասին»³⁹: 1930-ական թվականներին Վ. Վահանյանի դեմ կիրառված հալածանքները Վ. Ի. Լենինի կողմից ճանաչված պլեխանովագետին հնարավորություն չտվին ավարտելու իր մտահղացումները: Սակայն այն, ինչ նա հասցրեց անել, լուրջ ներդրում է ոչ միայն Գ. Պլեխանովի և «Աշխատանքի ազատագրություն» խմբի ուսումնասիրության, այլև Ռուսաստանում

34 Տեր-Վահանյան Վ. Ա. (Տեր), ծնվել է 1893 թ., ՍՄԿԿ անդամ 1912 թվականից. 1915—1917 թթ. աշխատել է Մոսկվայում, սկզբում Մոսկվորեցկի շրջանային կադմակերպությունում, ապա՝ Մոսկվայի կոմիտեի քարտուղար: 1922—1923 թթ. եղել է «Պող ղնամենեմ մարկսիզմա» հանդեսի խմբագիր, ապա աշխատել է «Պրավդա» թերթի ու «Կրասնայա Նովա» հանդեսի խմբագրություններում: Անհատի պաշտամունքի շրջանի զոհերից է: Այժմ արդարացված է:

35 Վ. Ի. Լենին, ԵԼԺ, հ. 45, էջ 201:

36 В. И. Ленин. Биографическая хроника, т. 12, с. 158.

37 «Լենին», ժողովածու, Մ., 1924, էջ 39:

38 «Խորհրդային Հայաստան», 9.VIII.1923:

39 Նույն տեղում, 27.IX.1923:

մարքսիզմի տարածման պրոբլեմների հետազոտման բնագավառում⁴⁰, վահանյանը խոշոր գործ է կատարել նաև Գ. Պլեխանովին հայ ընթերցողին ներկայացնելու գործում: ՀՍՍՀ պետական հրատարակչությունը պլանավորել էր Մոսկվայի իր բաժանմունքում տպագրել Գ. Վ. Պլեխանովի երկերի ժողովածուն՝ 8 հատորով, Վ. Վահանյանի ընդհանուր խմբագրությամբ: Սակայն լույս տեսավ նրա միայն մեկ հատորը, որի նախաբանում խմբագիրը բարձր գնահատական է տալիս երկերում գետնադրած գործերի հայերեն թարգմանությանը: «Պլեխանովի աշխատություններից «Մոնիստական պատմահայեցություն» թարգմանությունն ուղղակի քաջագործություն է»⁴¹, — գրում էր Վ. Վահանյանը: Այդ թարգմանությունը կուսակցական հին գործիչ և գրականագետ Դ. Տեր-Սիմոնյանին էր: Երկերի ժողովածուում գետնադրած մյուս աշխատությունները («Օգյուստ Թիեոնի և պատմության մատերիալիստական ըմբռնումը», «Մի քանի խոսք ի պաշտպանություն տնտեսական մատերիալիզմի», «Պատմության մատերիալիստական ըմբռնման մասին», «Պատմության մասին», «Անհատի դերը պատմության մեջ») թարգմանել էր Գ. Մեհրաբյանը: Դեռևս 1910 թ. Ս. Ս. Արկոմեդը ռուսերենից թարգմանել էր Գ. Պլեխանովի «Ուժ և բռնություն (հեղափոխական տակտիկայի մասին)» գրքույկը, որը հրատարակվում է 1930 թ. Թիֆլիսում: Գրքույկը բացվում է թարգմանչի կարևոր բացատրությամբ, որում նշվում էր Գ. Պլեխանովի մոտ 35 տարի առաջ լույս տեսած աշխատության կարևոր նշանակությունը նաև մեր օրերում: «Տակտիկայի վերաբերյալ Պլեխանովի այս նշանավոր բրոշյուրից կարելի է տեսնել, — գրում էր Ս. Ս. Արկոմեդը, — թե որոնք են եղել մեր բանվորական հեղափոխական կուսակցության անցյալում գործած տակտիկական սխալներն ու մոլորությունները, էլ չեմ խոսում մեր երկրի մյուս մանր-բուրժուական և նացիոնալիստական հեղափոխական կազմակերպությունների մասին, որոնց վերաբերմամբ, կարելի է ասել, նույնպիսի սխալներն ու մոլորությունները չէին կարող ոչ անթույլատրելի և ոչ էլ անբնական համարվել»⁴²:

1929 թ. Թիֆլիսում ռուսերեն լույս է տեսնում Ս. Ս. Արկոմեդի «Արտասահմանում. պատմական նոթեր» գիրքը, որը նվիրված է «փառաբանված» «Աշխատանքի ազատագրություն» խմբակին՝ նրա հիմնադրման քառասունհինգամյակի (1883—1928) կապակցությամբ: «1883 թ. սեպտեմբերը նշանակալից տարեթիվ է Ռուսաստանյան սոցիալիզմի համար»⁴³, — գրում էր հեղինակը: Եվ իրոք Գ. Պլեխանովի «Աշխատանքի ազատագրություն» խումբը, որպես ռուսական առաջին մարքսիստական սոցիալ-դեմոկրատական կազմակերպություն, մեծ դեր կատարեց Ռուսաստանում, հայ իրականության մեջ մարքսիզմի տարածման գործում: Նրա ստեղծումը Գ. Վ. Պլեխանովի խոշոր ծառայություններից է բանվորական շարժմանը⁴⁴:

1926 թ. Գ. Պլեխանովի ծննդյան 70-ամյակի և Պետերբուրգի Կազանյան հրապարակի բանվորական ցույցի 50-ամյակի առթիվ հայ նշանավոր մարքսիստ, տնտեսագետ, պատմաբան ու գրականագետ Թ. Ավագբեգյանը լրացումներով ու Գ. Պլեխանովի դիմանկարով վերահրատարակում է իր «Կարլ

40 Группа «Освобождение труда» (библиография за 50 лет), М., 1934. Այս մատենագիտական ժողովածուում, որի առաջաբանում (հեղինակ Վ. Նևսկի) Ի. Ստալինը բնութագրվում է որպես Կ. Մարքսի և Վ. Ի. Լենինի մեծ գործի «փառապանծ շարունակող», Գ. Պլեխանովի մասին Վ. Վահանյանի գործերի ցուցակում, որպես ծանոթագրություն նշված է: «Հեղինակը հեղափոխական է Համկ(բ)Կ-ից՝ հակահեղափոխական գործունեության համար» (էջ 65):

41 Գ. Վ. Պլեխանով, Երկերի ժողովածու, հ. 3, Մ., 1926, էջ 12:

42 Գ. Վ. Պլեխանով, Ուժ և բռնություն, Թիֆլիս, 1930, էջ V:

43 С. Т. Аркомед, նշվ. աշխ., էջ 3:

44 Երիտույն և տեխնիկա, 1981, № 12, էջ 46—50:

Մարքսի տնտեսական զարգացման թեորիան» աշխատությունը՝ այն նվիրելով Գ. Պլեխանովի հիշատակին:

1928 թ. Թիֆլիսում լույս տեսնող «Պրոլետարիատ» թերթում Գ. Պլեխանովի մահվան 10-ամյակի առթիվ «Առաջին ռուս մարքսիստը» վերնագրով ծավալուն հոդվածաշարով հանդես է գալիս հին բոլշևիկ Ա. խումարյանը⁴⁵, «Պլեխանովի... գրական աշխատությունները,— գրում է նա,— դեռ երկար տարիներ դասագրքեր են լինելու երիտասարդ մարքսիստական ուժերի համար: Ուսանելու շատ բան կա և Պլեխանովի կյանքի ու գործունեության մեջ... որպես մարքսիզմի առաջին ռուսացիչ ու որպես մարքսիզմի գաղափարների ու մտքերի գերագույն տարածող, որպես Ռուսաստանի բանվորական շարժման ճակատագրական հաղթանակը նախատեսող—այսօր էլ Պլեխանովը, որպես մարքսիզմի փիլիսոփա, տնտեսագետ, սոցիոլոգ, անհաշտ մարտնչող օպորտունիզմի դեմ, որպես Մարքսի տնտեսական անզուգական աշակերտ թանկ է Ռուսաստանի պրոլետարիատի համար»⁴⁶:

1956 թ. դեկտեմբերին ինչպես ամբողջ երկրում, այնպես էլ Հայաստանում, լայնորեն նշվեց Պլեխանովի ծննդյան 100-ամյակը, իսկ 1983 թ. «Աշխատանքի ազատագրություն» խմբի 1000-ամյակը: Սովետական Միության ժողովուրդները արժանին են հատուցում ռուսական և միջազգային բանվորական շարժման ականավոր գործին, որի աշխատություններով դաստիարակվել են հեղափոխության մարտիկների ամբողջ սերունդներ:

Г. В. ПЛЕХАНОВ И АРМЯНСКИЕ РЕВОЛЮЦИОННЫЕ ДЕЯТЕЛИ

Г. В. ГАРИБДЖАНИЯ

Академик АН АрмССР

Резюме

Выдающийся теоретик и пропагандист марксизма, деятель российского и международного рабочего и социалистического движения Г. В. Плеханов (1856—1918) сыграл большую роль в пропаганде марксизма среди армян. Передовые представители армянского народа с конца 80-х годов установили тесные связи с Плехановым и членами его группы «Освобождение труда».

Лучшие произведения Г. Плеханова с конца XIX в. переводились на армянский язык и пропагандировались в Армении и армянской действительности.

С Г. Плехановым лично были знакомы Г. Караджян (С. Т. Аркомед), И. Лалаянц, Аветис и Маро Назарбеяны, Б. Кнунианц, А. Зурабов, А. Ерзнкян, А. Меликян, П. Мнацаканян и др. революционные деятели. Письма И. Караханяна, В. Хачатрянца, А. Чилинкаряна, Т. Держиша и др. Г. В. Плеханову имеют важное значение для изучения развития армянской общественно-политической мысли, распространения марксизма в армянской действительности.

⁴⁵ «Պրոլետարիատ», 1928, № 123, 125, 128.

⁴⁶ «Պրոլետարիատ», 30.V.1928.